Աշխատանքային փաստաթուղթ

Քաղաքականության խորհրդաժողով, 10-11 հունիս 2002թ

.

Եվրոպական ընդլայնված համագործակցություն մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում

Այս փաստաթղթի նպատակն է տրամադրել նախապատմություն և ներդրում կատարել «ընդլայնված համագործակցություն եվրոպական մասնագիտական կրթության և ոսուցման բնգավառում» կոնֆերանսին, որը տեղի է ունեցել 2002թ. հունիսի 10-11-ին Բրյուսելում: Փաստաթուղթը բաղկացած է երեք հիմնական մասից՝

- Առաջին մասը ուրվագծում է «Եվրոպական ընդլայնված համագործակցություն մասնագիտական կրթության և ոսուցման բնագավառում (ՄԿՈՒ)» տեսլականը՝ արտացոլելով վերջին տարիների ընթացքում իրականացված քաղաքականության բազմազան նախաձեռնությունները: Այս մասի նպատակն է պարզել, թե ինչու ընդլայնված համագործակցությունը կարող է ինչ-որ բան ավելացնել եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման հարուստ բազմազանությանը:
- Երկրորդ մասը վեր է հանում չորս բնորոշ բնագավառ, որտեղ զգացվում է սերտ համագործակցության կարիք՝ կենտրոնանալով այն բանի վրա, թե ինչպես մասնագիտական որակավորումները և հմտությունները դարձնել առավել թափանցիկ, բարելավել դրանց ճանաչումը և բարձրացնել որակը: *Ճյուղային, ազգային և միջազգային* (եվրոպական) որակավորումների արագ փոփոխվող հարաբերությունները կկիրառվեն ներկայիս իրավիճակը և առկա մարտահրավերները ներկայացնելու համար:
- Երրորդ մասը վեր է բարձրացնում է այն հարցը, թե ինչպես իրականացնել սերտ համագործակցություն նոր և/կամ բարելավված մեթոդների, ինչպես նաև հատուկ ծրագրերի միջոցով:

Զեկույցում ներկայացված չեն ոչ մի ավարտուն կամ վերջնական լուծումներ: Դրա նպատակն է գործերի ներկայիս կարգավիճակի վերբերյալ վերը նշված ոլորտներում կատարել մեկնաբանություններ և դրա հիման վրա նշել հնարավոր ռազմավարությունները: Այդ մեկնաբանություններին արձագանքումը և հետագա շարունակության մասին վկայումը թողնված է կոնֆերանսի հայեցողությանը:

1. Ինչու՞ ընդլայնված համագործակցություն եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) մասով

2000թ. մարտին կայացած Լիսաբոնի Եվրոպական Խորհուրդը Եվրամիության համար առաջ քաշեց ռազմավարական նպատակ դառնալու աշխարհի ամենամրցունակ և դինամիկ գիտակենտրոն հասարակություն լինելը: Մասնագիտական կրթության և ուսուցման

զարգացումը այս ռազմավարության էական և բաղադրիչ մաս է հանդիսանում: 2002թ-ի մարտին կայացած Բարսելոնայի Եվրոպական Խորհուրդը վերահաստատեց դրա կարևոր դեր լինելու հանգամանքը: Եզրակացությունները համապատասխան գործիքների կիրառման իրավասություն են տալիս՝ որակավորումների թափանցիկությունն ապահովելու և, զուգահեռ բարձրագույն կրթության բնագավառին առնչվող Բոլոնիայի գործընթացներին, ՄԿՈՒ բնագավառում սերտ համագործակցություն ծավալելու նպատակով: Բարսելոնայի խորհուրդը նաև նպատակ էր հետապնդում մինչև 2010[1]թ. եվրոպական կրթական և ուսուցման համակարգերը դարձնել աշխարհում իրեն հավասարը չունեցող որակի կողմնորոշիչ:

Հետևելով ցկյանս ուսումնառության վերաբերյալ զեկույցին, որը 2001թ. նոյեմբերին հրապարակվել է Հանձնաժողովի և ողջունվել է Բարսելոնայի Խորհրդի2 կողմից, մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) զարգացմանն ուղղված ռազմավարությունը թիրախային պետք է համարի բոլոր տարիքային խմբերը և ուսումնառության բոլոր ձևերը՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ: Զեկույցում շեշտվում է նաև, որ ցկյանս ուսումնառությունը ամբողջ Համայնքում խթանելու և աջակցելու մասով եվրոպական մակարդակում էական դեր ունի խաղալու համագործակցությունը: Անդամ պետությունները, ընդհանուր առմամբ շարժվելով միևնույն ուղությամբ, պետք է պատասխանատվություն կրեն իրենց սեփական համակարգերի մշակման և ղեկավարման համար: Եվրոպական մասնագիտական կրթությունը և ուսուցումը դարձնելով համաշխարահային առաջատար՝ այս եզրահանգումների հետ մեկտեղ, այնուամենայնիվ պահանջում է կամքի դրսևորում/առաջիկա մարտահրավերները վերանայելու և բոլոր մակարդակներում համագործակցությունը ընդլայնլեու համար:

Քաղաքացիների համար անդրազգային շարժունակությունն ապահովող կարողությունների ընդլայնման, նրանց որակավորումների և կարողությունների կիրառման թույլատրման նպատակով որոշակի մակարդակում, մի համակարգում և անգամ մի երկրում անհրաժեշտ է շարժվել առաջ՝ ամենահնարավորինը ձեռք բերելու նպատակով: Հետևյալ երեք մարտահրավերները նշում են, թե որտեղ կարող են կենտրոնանալ կամավորական, սերտ և վառ արտահայտված համագործակցության ջանքերը:

- Եվրոպայում գոյություն ունեցող մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնողները բավականին մասնատված են և դժվար է դրանց դիտարկել թե ազգային և թե եվրոպական մակարդակներում: Անհատների և ընդհանուր առմամբ հասարակությունների համար հիմնական մարտահրավերն է, որտեղ որ դա հնարավոր է, շարժվել դեպի դրական բազմազանություն, տեսնել թե ինչպես կարող է լավագույն կերպով համատեղված լինել ուսումնառության կարողությունների և արդյունքների հսկայական բազմազանությունը:
- Մի համատեքստից մյուսը որակավորումների և կարողությունների փոխակերպումը դառնում է ավելի ու ավելի անհրաժեշտ, բայց գուցե և այն էլ ավելի անհրաժեշտ է

1Նախագահական եզրակացություններ 44 և 43 կետեր, 15-16 մարտ 2002, Բարսելոնա

2Նախագահական եզրակացություններ 45, «Եվրոպական Խորհուրդը ողջունում է «Ցկյանս ուսումնառության Եվրոպական տարածքի իրագործման» Հանձնաժողովի Զեկույցը և հրավիրում է Խորհրդին, մինչև Սևիլում կայանալիք Եվրոպական Խորհուրդը (30 մայիս 2002), որոշում ընդունել ցկյանս ուսումնառության մասին՝ հաշվի առնելով Եվրոպական Զբաղվածության Ռազմավարությունը»

ազգային աշխատուժի շուկայի տարբեր մասերի միջև: Մինչ օրս լուծումները միայն որոշակի չափով էին բավարարում մասնագիտական կրթության և ուսուցման կարիքները: Մասնագիտական կրթությունում ցկյանս հեռանկարի կիրառումը որակավորումների և կարողությունների վավերացման, փոխակերպման և բաշխման պատշաճ համակարգ է պահանջում:

- Մասնագիտական կրթության և ուսուցման որակն էականորեն տատանվում է Եվրոպայում: Դրա պատճառը որոշակի չափով հանդիսանում է ազգային որակավորումների համակարգի, ավանդույթների և մոտեցումների զանազանությունը, իսկ մեծամասամբ՝ կրթության և ուսուցման առաջարկների տարածումն է (մասնավորապես շարունակական) ազգային, հասարակական համակարգերից դուրս: Մասնագիտացված, հազվադեպ մասնավոր, ուսուցում իրականացնողների տարածումը չափազանց դժվարեցնում է որակի պատշաճ ապահովումը: Թափանցիկ և համընդհանուր կերպով ընդունված որակի չափանիշների մշակումը, լայն առումով վերցված, ռազմավարությունում կարող է դիտվել որպես հիմնական հատկանիշ՝ եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման ամբողջական իրականացումը բարելավելու համար:

Այս մարտահրավերները ենթադրում են, որ գալիք տասնամյակում եվրոպական մասնագիտական կրթությունը և ուսուցումը հնարավոր կդարձնեն օգտվել առկա կառույցների և համակարգերի բազմազանությունից և հարստությունից՝ ստեղծելով երկարամյա ավանդույթներ՝ որակի և մասնագիտական հպարտության մասով: Պետք է հավասարակշռություն պահպանել երկարաժամկետ և կայուն հեռանկարների միջև, որոնք տրամադրվում են հասարակական կրթական և ուսուցման ուժեղ համակարգերի և աշխատանքային կյանքի ավելի մասնագիտացված և ճկուն ուսումնառության բնութագրի կողմից: Որպես այդպիսին ամբողջապես պիտի կիրառվի ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ձևաչափերի ուսումնառությունը: Մոտեցումների այդպիսի հավասարակշռված ամբողջությունը, կապելով հասարակական և մասնավոր իրականացնողներին, ցկյանս ուսումնառության ամուր հիմք կտրամադրի ազգային, տարածաշրջանային և տեղական (ներառյալ փորձագիտական) մակարդակներում: Ի հավելումն այս ամենի, եվրոպական և միջազգային որակավորումների մշակումը պետք է աջակցվի շուկաների և տեխնոլոգիաների գլոբալիզացիայի մասով:

Այս մարտահրավերների լուծումները, այնուամենայնիվ, պետք է փնտրվի ինստիտուտների, մակարդակների, համակարգերի և ազգերի փոխկապակցվածության մեջ: Կան ակնհայտ և անգամ տրամաբանական սահմաններ այն մասին, թե ինչ կարող է ձեռք բերվել մի ինստիտուտում և նույնիսկ ազգային համակարգում՝ մասնատվածության, փոխակերպման աջակցության և մասնագիտական կրթության և ուսուցման առաջարկների ամբողջական որակի հզորացման մասով: ՏՀԶԿ-ի (OECD) կողմից իրականացված վերջին ուսումնասիրությունները (2001թ.) ցույց են տալիս, թե ինչպիսի բարձր պատնեշներ գոյություն ունեն կրթական և ուսուցման ինստիտուտների և համակարգերի միջև և թե ինչպես է այն դժվարեցնում առկա ռեսուրսների կիրառման օպտիմիզացիան:

Համագործակցության ջանքերը պետք է ներառեն բոլոր գլխավոր դերակատարներին՝ անկախ նրանց գործառնության մակարդակից և ինստիտուցիոնալ համատեքստից: Համակարգման և վերահսկման իրավական և վարչական մեխանիզմները, ինչպես բնորոշ է

ազգային որակավորումների համակարգերին, փոխլրացման կարիք ունեն այլ գործիքների և մոտեցումների կողմից՝ ինչպիսիք են լավագույն փորձի փոխանակումը, երկխոսությունը և փորձագիտական գնահատականը: Ընդլայնված համագործակցության սկզբունքների վերաբերյալ նրանց քննարկման ժամանակ մասնագիտական կրթության մասով գլխավոր տնօրենները (ՄԿԳՏ) Սանտիագո դե Քոմպոսթելայում (Իսպանիա, 23-24 ապրիլ 2002թ.) եկան ընդհանրական համաձայնության հետևյալ կետերի շուրջ՝

- Կամավորական ու ներքևից վերև սկզբունքով և համաձայն Պայմանագրի 149 և 150 հոդվածների՝ ՄԿՈՒ բնագավառում կարիք չկա ընդլայնված համագործակցության՝ Բարսելոնայի Եվրոպական Խորհրդի հրահանգն իրականացնելու համար:
- Սոցիալական գործընկերների ակտիվ ներգրավվածությունը, ինչպես նաև ԵՏՏ և թեկնածու հանդիսացող երկրները էական դեր են խաղում այս նախաձեռնության հաջողության գործում:
- Պետք է կիրառվի երկարատև հեռանկար:
- Ընդլայնված համագործակցության նպատակը մի կողմից պետք է լինի փոխադարձ վստահության, թափանցիկության և որակավորումների ընդլայնված ճանաչման առաջքաշումը և մյուս կողմից, որակի մասով, ՄԿՈՒ կարգավիճակի բարձրացումը:

Սրանք են այն սկզբունքները, որոնց վրա պետք է հիմնված լինի կամավորական համագործակցության գործընթացը՝ ըստ համաձայնեցված չափանիշի՝ ձգտելով որոշարկել համագործակցության պարզ միջոցներ:

2. Եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման մասով ընդլայնված համագործակցության առաջնային տարածաշրջանները

Այս եկրորդ մասի նպատակն է վեր հանել չորս բնորոշ տարածաշրջաններ, որտեղ կա կարիք և կարողություն եվրոպական ընդլայնված համագործակցության համար: Առաջին երեք ենթագլուխներն արծարծում են մասնագիտական որակավորումների և կարողությունների թափանցիկությունը, ճանաչումը և որակը: Դրա նպատակն է ամփոփել «գործերի ներկա կարգավիճակը» ամեն մի տարանջատված բնագավառում և այս ամենը որպես հիմք կիրառել կարճաժամկետ և երկարաժամկետ առաջնահերթությունների արտացոլման համար: Ոլորտային և ճյուղային մակարդակների որակավորումներին վերաբերող չորրորդ ենթագլուխը, խաչվող է այն իմաստով, որ թափանցիկության, ճանաչման և որակի քաղաքականությունները կարող են ազդեցություն ունենալ այս բնագավառների զարգացումների վրա:

2.1 Մասնագիտական որակավորումների և կարողությունների թափանցիկությունը

Որակավորումների թափանցիկությունը սահմանվել է CEDEFOP (2001թ.) կողմից որպես «տեսանելիության աստիճան, որն անհրաժեշտ է որոշարկել և համեմատել որակավորումների արժեքը ոլորտային ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային մակարդակներում»: Այս սահմանման նշումներում CEDEFOP-ը թվարկում է պատճառների մի շարք՝ բարելավված թափանցիկության մշակման մասով, օրինակ՝

- աջակցել աշխատանք փնտրողներին պոտենցիալ գործատուներին բացատրելով ազգային և միջազգային մակարդակում իրենց որակավորումները և կարողությունները,
- աջակցել անհատ ուսումնառողներին ֆորմալ կրթության և ուսուցման կարողություն ունենալու համար,
- աջակցել գործատուներին և ուսումնական կառույցներին՝ «ներքին» և «արտաքին» որակյալ դատողություններ անելու համար,
- ազգային որակավորումների մարմինների և ինստիտուտների միջև որակավորումների մասով բարելավել համագործակցությունը և փոխադարձ ուսումնառությունը,
- աջակցել որակավորումների և հնարավորությունների փոխակերպմանը երկրների, ոլորտների, ձեռնարկությունների միջև՝ դրանով իսկ նպաստելով աշխատաշուկայի շարժունակությանը:

1990-ականների ընթացքում մի քանի ԵՄ նախաձեռնություններ կարևորեցին մասնագիտական որակավորումների ընդլայնված թափանցիկությունը: Եվրոպական Խորհրդի 1992թ. դեկտեմբերի 3-ի որոշումը ընդգծեց անդամ պետությունների որակավորումների և որակավորումների համակարգի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տրամադրման կարիքը, այդիպով օտարերկրյա որակավորումների վերաբերյալ դիտողությունները դարձնելով ավելի դյուրին անհատների և ձեռնարկատերերի համար: Խորհրդի 1996թ. հուլիսի 15-ի որոշումը կոչ էր անում անդամ պետություններին առաջ քաշել ընդլայնված թափանցիկությունը՝ ձեռք բերված որակավորումների նկարագիրը տրամադրող վկայականների ներդիրների համընդհանուր ձևաչափի ներկայացման միջոցով: Եվրոպական Խորհրդի 1998թ. դեկտեմբերի 21-ի որոշումը, որը առաջ էր քաշում Եվրոփասի (EUOROPASS) գաղափարը, նույնպես կարող է դիտվել որպես նախաձեռնություն՝ աջակցելով մասնագիտական որակավորումների թափանցիկությանը: Եվրոփասի (EUOROPASS) նպատակն է աջակցել և առաջ քաշել աշխատանքի հետ կապված ուսուցման շարժունակությանը՝ տրամադրելով արձանագրային ժամանակահատվածների (բայց ոչ ինքնաբերաբար ճանաչման) համաեվրոպական կամավորական միջոցներ անդամ պետություններից դուրս:

Բացառությամբ ուսումնառողների համար 2000թ-ից հասանելի դարձած Եվրոփասի (EUOROPASS) և մի քանի անդամ պետությունների վկայականների ներդիրների մշակման և ներդրման ուղղված ջանքերի՝ այս նախաձեռնությունների վերաբերյալ կատարվեց մի փոքր հետևողական աշխատանք: ՄԻնչ օրս Լեոնարդո դա Վինչիի ծրագիրը, հեմենայն դեպս, աջակցել է ընդլայնված համագործակցության զանազան միջոցների մշակմանը և փորձարկմանը: Աշխատելով թափանցիկության լայնածավալ միջոցների և գործիքների վրա՝ այս ծրագրերը կարևոր հետադարձ կապ տվեց, թե ինչպես լուծել մասնագիտական որակավորումների թափանցիկության հետ կապված տեխնիկական և կազմակերպչական խնդիրները:

Լեոնարդո դա Վինչիի ծրագրի առաջին փուլը (1995-99թթ) ներկայացնում է, որ մասնագիտական որակավորումների թափանցիկությունը այդքան էլ տեխնիկական խնդիր չէ: Իրականում խոստումնալից գործիքների և մոտեցումների մի լայնածավալ շարք է մշակվել և հասանելի դարձվել: Այս նախաձեռնությունների ազդեցությունը սահմանափակ էր,

համենայն դեպս, քիչ ջանքեր են իրականացվել, որպեսզի ապահովեն ծրագրի արդյունքների իրականացումը կանոնավոր և մշտական գործող կառույցներում և համակարգերում:

Ինստիտուցիոնալ և քաղաքական հետևողականության բացակայությունը հանգեցրեց 1999թ «Մասնագիտական որակավորումների թափանցիկության Եվրոպական ֆորումին»: Նախաձեռնված լինելով Եվրոպական հանձնաժողովի և CEDEFOP-ի կողմից՝ Ֆորումի հիմնական խնդիրն էր աջակցել մասնագիտական որակավորումների թափանցիկության լուծումների մշակմանն ու կիրառմանը: Բաղկացած լինելով բոլոր անդամ պետությունների և սոցիալական գործընկերների ներկայացուցիչներից՝ Ֆորումը կարող էր գրավել խնդրի ուշադրությունը քաղաքական և ինստիտուցիոնալ մասով (պաշտոնական կերպով ընդլայնված լինելով Եվրոպական Խորհրդարանի Երաշխավորագրերով և Խորհրդի 2001թ. հուլիսի 10-ի Համայնքի շրջանակում շարժունակության[3] միջոցով): Այս աշխատանքի արդյունքն էր եվրոպական թափանցիկության նոր գործիքների շարքի ներկայացումը՝ մասնավորապես կենտրոնանալով մասնագիտական որակավորումների վրա:

- Եվրոպական վկայականի նոր ներդիրը հիմնված է Խորհրդի 1996թ. որոշման առաջ քաշած գաղափարի վրա: Այս ներդիրը տրամադրում է տեղեկատվություն վկայականը կրողի կողմից ձեռք բերված կարողությունների և հմտությունների, վկայականը կրողի համար հասանելի զբաղմունքների մասին, ինչպես նաև այն տրամադրողների, վկայականի մակարդակի, վկայականի ձեռք բերման տարբեր միջոցների (դպրոցի և աշխատանքի համակցում) մասին և նաև կրթության հաջորդ մակարդակ մուտք գործելու պահանջների մասին: Այս ներդիրը չի կարող փոխարինել բնօրինակ վկայականին և ոչ էլ այն երաշխիք է հանդիսանում, որ նշված հմտությունները և որակավորումները ճանաչվել են: Ներդիրի ուժը կայանում է նրանում, որ այն հասարակ (երկու էջից բաղկացած) ձևաչափ է, որի համընդհանուր ձևաչափը ընդունվել է եվրոպական մակարդակով և որ բոլոր անդամ պետություններն ու Եվրոպական տնտեսական տարածքի երկրները ընդունել են այն կիրառելու նպատակով:
- Մանագիտական որակավորումների «Հղման Ազգային կետերի» եվրոպական նոր ցանցը հիմնված է Լեոնարդո դա Վինչի ծրագրի փորձի վրա: Հղման կետը պետք է լինի կապի առաջին միջոցը՝ կապված ազգային որակավորումների և վկայականների երևան գալու հետ: Հղմանը վերաբերող կետը այլ հղումային կետերի կապի միջոցով հնարավոր է դարձնում տեղեկատվության կողմնորոշում տրամադրելը (թե որտեղից կարելի է տեղեկատվություն գտնել) թե տվյալ երկրի ներսում և թե դրանից դուրս: Մինչ օրս (2002թ. մայիս) 18 երկիր (անդամ պետությունները, Եվրոպական տնտեսական տարածքի երկրները և թեկնածու հանդիսացող երկրները) արդեն ստեղծել է կամ ստեղծում է Հղման Ազգային կետեր:
- Ինչպես ներկայացնում է Հանձնաժողովի 2002թ. մարտի երաշխավորագիրը Եվրոպական նոր ինքնակենսագրականի (CV) նպատակն է անհատներին ապահովել պարզ, ստանդարտացված, բայց կամավորական մի ձևաչափ՝ կրթության և ուսուցման միջոցով ձեռք բերված ֆորմալ որակավորումների, ինչպես նաև աշխատանքի

[3]OJ L215 9.8.2001, Եվրոպական Խորհրդարանի առաջարկությունները և Համայնքի շրջանակներում Շարժունակության վերաբերյալ 2001թ. հուլիսի 10-ի Խորհուրդը (ուսանողների, ուսուցում անցնող մարդկանց, երիտասարդ կամավորների, ուսուցիչների և ուսուցանողների համար)

ընթացքում ձեռք բերված կարողությունների, ընտանեկան և ազատ ժամանակ նախընտրած զբաղմունքների ներկայացման վերաբերյալ:

Այս դրական զարգացումները չպետք է թաքցնեն, համենայն դեպս, առկա այդ մարտահրավերները: Հետևյալ կետերը տարորոշում են, թե որտեղ պետք է կիրառվեն հետագա նախաձեռնություններն ու գործողությունները:

- Գոյություն ունեցող գործիքները և ծառայությունները, որոնք նպաստում են մասնագիտական որակավորումների թափանցիկությանը անհրաժեշտ չափով տեսանելի և մատչելի չեն հասարակ քաղաքացիների համար:
- Գործիքները և ծառայություններն ընդհանուր առմամբ պետք է մշակվեն և ներկայացվեն մեկը մյուսից առանձին և ոչ թե որպես մի ռազմավարության տարրեր: Օրինակ հնարավոր է արդյոք ենթադրել, ինչպես որ դա արված է Ցկյանս ուսումնառության զեկույցում, եվրոպական մի «ամբողջական մոդել», որը ամենասահուն կերպով տարբեր մոտեցումները կապում է միմյանց հետ:
- մասնագիտական կրթության և ուսուցման այս գործիքները և ծառայությունները պետք է համակարգվեն զուգահեռ այլ գործիքների և ծառայությունների կողմից, որոնք մշակվել են բարձրագույն կրթության համար: Այն հանգամանքը, որ մասնագիտական կրթության և ուսուցման վկայականի ներդիրը ներկայումս գործառնում է բարձրագույն կրթության դիպլոմի ներդիրին զուգահեռ կարող է շփոթմունքի պատճառ հանդիսանա: Կարիք չկա պարզել մասնագիտական կրթության և բարձրագույն կրթության NARIC և ENIC կենտրոնների համար նախատեսված նոր հղումային կետերի միջև առկա կապը:
- Պետք է վեր հանվի մասնագիտական որակավորումների թափանցիկությանն աջակցող խորհրդատվական և կողմնորոշման ծառայությունների դերի խնդիրը: Մասնակի ուշադրություն պետք է դարձվի մասնագիտական կողմնորոշման ազգային ռեսուրս կենտրոնների (ՄԿԱՌԿ) եվրոպական ցանցին: Կարիք չկա պարզաբանել ՄԿԱՌԿ-երի և մասնագիտական որակավորումների նոր հղման կետերի միջև առկա կապը:
- Առկա նախաձեռնությունները, ընդհանուր առմաբ, կենտրոնանում են ֆորմալ, նախնական ուսուցման միջոցով ձեռք բերված (արտացոլված վկայականի ներդիրի միջոցով) մասնագիտական որակավորումների թափանցիկության վրա: Մինչ սա հանդիսանում է կարևոր և տրամաբանական սկզբնակետ՝ մինչ օրս ոչ ոք համակարգված ձևով չի անդրադարձել շարունակական ուսուցման և ոչ ֆորմալ ուսումնառության միջոցով ձեռք բերված որակավորումների և կարողությունների թափանցիկությանը: (տես նաև 2.2.2 բաժինը):

2.2 Մասնագիտական որակավորումների և կարողությունների ճանաչում

Ճանաչումը վերաբերում է այն հավաստիացմանը, որ մի շարք որակավորումներ և կարողություններ արժեք ունեն և որ դա (առնվազն) համարժեք է (բայց ոչ պարտադիր կերպով հավասար) ճանաչող մարմնի կողմից սահմանված պահանջներին: Ճանաչում տերմինը պատշաճ կերպով հասկացվելու համար պետք է օգտագործվի հատուկ համատեքստում՝

- ձեռնարկությունը կարող է ճանաչել աշխատանքային փորձառության միջոցով ձեռք բերված կարողությունները, եթե դա բավարարում է աշխատանքային կազմակերպության կողմից սահմանված որակին և բովանդակությանը,
- կրթական և ուսուցման կառույցը կճանաչի (կվկայի կամ կլիազորի) ուսումնառության արդյունքը, եթե դա բավարարում է ուսումնական ծրագրերի կամ այլ ստանդարտների սահմանած պահանջներին,
- ազգային որակավորման մարմինը կարող է ճանաչել օտարերկրյա որակավորումները, եթե նա համարի, որ դրանք համարժեք են իրենց սեփական որակավորումներին:

Անկախ ֆորմալացված լինելու աստիճանից՝ ճանաչումը անխուսափելիորեն կպահանջի <u>թափանցիկություն</u> և <u>փոխադարձ վստահություն</u>: Թափանցիկությունն անհրաժեշտ է, որպեսզի դատենք ուղղվածության և բովանդակության մասին, վստահությունն անհրաժեշտ է, որպեսզի կրճատի բարդությունն ու կասկածը «դրսում» ձեռք բերված որակավորումների և կարողությունների մասով (եթե սա լիներ այլ ոլորտում, կրթության ու ուսուցման այլ համակարգի այլ բաժնում կամ այլ երկրում):

Ավանդաբար, ճանաչմանը նվիրված եվրոպական քննարկումները բացառապես կենտրոնացած են եղել օտար որակավորումների ճանաչմանը: ԵՄ-ի շրջանակներում տեղի ունեցող աշխատուժի ազատ շարժը պահանջում է, որ անհատ քաղաքացիներին թույլ տրվի փոխանցել և կիրառել իրենց երկրներում ձեռք բերված ազգային որակավորումները այլ անդամ պետություններում ևս: Ցկյանս ուսումնառության վերաբերյալ եվրոպական ռազմավարության հրատապությունը, կարևորելով ոչ ֆորմալ և ինֆորմալ ձևաչափերով ձեռք բերված որակավորումների կիրառությունը, պահանջում է ճանաչման խնդրի ավելի լայն մոտեցում:

Այս ընդահուր դիտողությունները կներկայացվեն միջազգային շուկայի հետ կապված ճանաչմանն ուղղված առկա իրավական մոտեցումների ներկայացումների և քննարկումների միջոցով ինչպես նաև ճանաչման նոր ձևերը ի հայտ են գալիս չկարգավորվող մասնագիտությունների ու նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության հետ մեկտեղ:

2.2 Մասնագիտական որակավորումների ճանաչում (կարգավորվող և չկարգավորվող մասնագիտություններ և որակավորումներ)

Ճանաչումը վերաբերում է այն հավաստիացմանը, որ մի շարք որակավորումներ և կարողություններ արժեք ունեն և որ դա (առնվազն) համարժեք է (բայց ոչ պարտադիր կերպով հավասար) ճանաչող մարմնի կողմից սահմանված պահանջներին: Այս տերմինի իմաստը զգալիորեն տարբերվում է՝ տատանվելով աշխատանքային կազմակերպությունների կողմից սահմանված ստանդարտների համաձայն ճանաչումից մինչև կրթական և ուսուցման կառույցների կողմից սահմանված ստանդարտների համաձայն ճանաչման կամ համաձյան ազգային, եվրոպական կամ միջազգային տեխնիկական առաջադրանքների համաձայն օտարերկրյա որակավորումների ճանաչում:

Այս ոլորտում համագործակցությունը անհրաժեշտ է, որպեսզի այն հաղթահարի անդրազգային շարժունակության արգելքները և հնարավորություն տա քաղաքացիներին ողջ Եվրոպայով մեկ որպես համընդհանուր արժույթ կիրառել իրենց որակավորումները և

կարողությունները: Մինչ ճանաչմանը նվիրված եվրոպական քննարկումները կենտրոնացել էին «օտարերկրյա որակավորումների» վրա, կրթության և ուսուցման մասով ցկյանս հեռանկարի կիրառումը պահանջում է, որ ավելի լայն մի մոտեցում մշակվի՝ ներառելով ոչ ֆորմալ և ինֆորմալ ճանաչման մարտահրավերները:

2.2.1 Մասնագիտական որակավորումների ճանաչումը կարգավորվող մասնագիտություններում

Կարգավորվող մասնագիտությունների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ իրավական նորմերը որոշակի որակավորում ունեցողների համար սահմանափակում են մուտքը դեպի այս մասնագիտությունները՝ որպես անկախ արհեստավարժ փորձարարագետ կամ որպես աշխատակից: Ազգային ռեժիմները հիմնված են տեղական որակավորումների վրա՝ մասնագիտությունը հասանելի դարձնելով իրենց տարածքում: Սա կարող է բերել ազատ տեղաշարժերի իրավական խոչընդոտի, քանի որ այլ անդամ պետությունների մասնագետները ունեն տարբեր որակավորումներ, որոնք ձեռք են բերվել այլ իրվասություններով: Սա է այն պատճառը, թե ինչու են ընդունվել մի շարք հրահանգներ Եվրախորհրդի համաձայնագրի 47.2 հոդվածի մասով՝ կամ հիմնականում բոլոր անդամ պետություններում կրթության և ուսուցման նվազագույն համակարգում կիրառության համար, որը հանգեցնում է Եվրամիության շրջանակներում որոշակի տիտղոսների ինքնաբերաբար ճանաչման, կամ էլ ապահովելով այն, որ առանց ուսուցման նվազագույն համակարգման, որևէ անդամ պետությունում ձեռք բերած մասնագիտական որակավորումների և փորձի հիման վրա մասնագետները կարող են տեղաշրժվել, որն էլ հանդիսանում է փոխհատուցման միջոցառումների պատճառ: Փոխհատուցման միջոցառումները ներգաղթողի ընտրությամբ կարող են իրենցից ներկայացնել կամ կարողությունների ստուգման թեստ կամ հսկվող փորձաշրջան: Նրանք մշակված են, որպեսզի լրացնեն էական տարբերությունները, որոնք ակնհայտ են ներգաղթողի և անդամ պետություններում պահանջվող կարողությունների միջև, որտեղ էլ հենց ճանաչման որոնման աշխատանքներ են կատարվում: Փաստաբանները կանգնած են երկու հատուկ հրահանգների մշակման նախաշեմին՝ մշակելով և իրավասությունների հիման վրա ստեղծելով ծառայությունների իրականացման ազատական ռեժիմ՝ պետությունների որակավորումների տիտղոսների ներքո գործառնելու համար:

Մինչ այս հրահանգների գործառնությունը պահանջում է նվազագույն համակարգում և ուսուցում (բժիշկները, ընդհանուր ուղվծություն ունեցող բուժքույրերը, ատամնաբույժները, անասնաբույժները, մանկաբարձները, դեղագործները և ճարտարապետները) չեն պահանջում ոչինչ ավելին, քան անհրաժեշտ փաստաթղթերի վավերացում, Ընդհանուր Համակարգի ներքո տեղի ունեցող ճանաչման գործընթացները պահանջում են ամեն մի ներգաղթողի կրթության, ուսուցման և մասնագիտական փորձի մասին վկայող բոլոր փաստաթղթերի ուսումնասիրություն և գնահատում: Ընդհանուր համակարգի ներքո անհատ մասնագետին տրամադրվող ճանաչումը այդ իսկ պատճառով իրավասու մարմինների համար կարող է հանդիսանալ վարչական բեռ: Համակարգված կրթության և ուսուցման ներքո հավելյալ համեմատելիությունը և համատեղելիությունը կարող է նաև հետագայում հզորացնել ազատ տեղաշարժման հիմքերը: Բոլոր այն միջոցները, որոնցով մասնագիտական ճանաչման պայմանները կարող են պարզեցվել և բարելավվել, այսպիսով

կարող են իրենց ներդրումն ունենալ համակարգի արդյունավետ գործառնության համար: Եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման մասով ընդլայնված համագործակցությունը կարող է իր կարևոր ներդրումն ունենալ կարգավորվող մասնագիտությունների մասով ճանաչման գործընթացների առաջ քաշմանը:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը վերջերս ներկայացրել է մասնագիտական որակավորումների ճանաչման հրահանգի նոր առաջարկ (COM(2002)119 փաստաթուղթ՝ ընդունված 2002թ. մարտի 7-ին): Այս առաջարկը շարունակում է համախմբման և պարզեցման երկար գործընթացը, որը սկսվել է Ներքին Շուկայում Ավելի Պարզ Օրենսդրության (ՆՇԱՊՕ) նախաձեռնության ներքո և 60 հոդվածից բաղկացած մի տեքստով փոխարինում է մոտ 300 հոդված ունեցող 50 հրահանգի: Այս առաջարկը, համաձայն Լիսաբոնի և Սթոքհոլմի Եվրոպական Խորհուրդների կողմից տրամադրված մանդատների, ծառայությունների իրականացման համար նաև ապահովում է ավելի պարզ և հստակ պայմաններ՝ ավելի շարժուն և մրցունակ գիտելիքահեն տնտեսության և Հանձնաժողովի Նեքին Շուկայի Ծառայությունների Ռազմավարության իրականացման մասով: Վերաբերելով Ընդհանուր Համակարգին և հետևելով շահագրգիռ կողմերի միջև անցյալ տարի անցկացված բաց խորհրդատվության արդյունքներին՝ այս առաջարկը երաշխավորում է մասնագիտական հենքի ընդունում՝ որպես ազատ տեղաշարժի ավելի դյուրին պայմանների մշակման միջոց, որը համապատասխանում է յուրաքանչյուր մասնագիտության բնորոշ հատկանիշներին: Այս առաջարկը նաև ձգտում է հզորացնել այն աջակցությունը, որը տրամադրվում է ազգային հեղինակությունների կողմից իրենց ներգաղթող մասնագետներին: Խորհրդարանում և Խորհրդում հունիսին սկսվել է Առաջարկի օրենսդրական գործընթացը: Հմտությունների և շարժունակությանը վերաբերող գործողությունների պլանում Հանձնաժողովը պահանջում է առաջարկի վաղ ընդունում 2003թ-ին՝ 2005թ-ին այն կիրառելու նպատակով:

2.2.2 Ոչ կարգավորվող մասնագիտությունների, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչում

Քանի դեռ կարգավորվող մասնագիտությունների մասով մասնագիտական ճանաչման առկա կանոնները բավականին հարաբերական են մասնագիտական որակավորումների և կարողությունների համար աշխատուժի շուկայի ընդլայնված համամասնությունը գործառնում է կարգավորվող ոլորտներից դուրս: Այնուամենայնիվ անհրաժեշտություն կա համակարգված ձևով հաշվի առնել, թե ինչպես աջակցել ճանաչմանը չկարգավորվող ոլորտում: Մարտահրավերն այն է, որ նվազագույն պահանջները գերազանցեն այնպես, որ բազմազանությունը ընդունվի որպես դրական առավելություն, որպես մի բան, որը ազգային որակավորումներին տալիս է հավելյալ արժեք: Կրեդիտների փոխանցման նոր համակարգի մշակումը, որն իր մեջ ներառում է նախնական և շարունակական ՄԿՈՒ-ն և գործառնում է եվրոպական մակարդակում, կարող է ինչ որ ձևով գերազանցի այս նվազագույն իրավունքներն ու պարտականությունները: Այսպիսի համակարգը պետք է հիմնված լինի հնարավորինս պարզ չափանիշների շարքի վրա:

Ընդլայնված փոխադարձ վստահությունը Եվրոպայում մասնագիտական որակավորումների ճանաչման հիմքն է: Ճանաչման վերաբերյալ նոր պրոակտիվ մոտեցումը պետք է գերազանցի նվազագույն պահանջները, որոնք սահմանված են կարգավորվող մասնագիտությունների համար և դիմակայում են «ներքին» և «արտաքին»

որակավորումներին ուղղված վստահության պակասին: Սրան ուղղված առաջին քայլը պետք է համաձայնեցվի կամավորական ստանդարտների շարքին համաձայն, որոնք կարող են օգտագործվել վկայական տրամադրող մարմինների կողմից և կարող են կիրառվել վկայականներում: Ինչպես ցույց է տրված առկա նորմերում (տես օրինակ Եվրոպական Նորմ 45013) վկայականի հուսալիությունը և հավաստիությունը կարող է աճել համընդհանուր և թափանցիկ սկզբունքների շարքի ներկայացմամբ: Այն վկայականները, որոնք կազմվում են այս սկզբունքների հիման վրա, պետք է համապատասխանորեն պիտակավորվեն, այսպիսով համընդհանուր ստանդարտների կիրառմամբ ազդարարելով հավելյալ արժեքը:

Ֆորմալ կրթական և ուսուցման կառույցներից դուրս, աշխատավայրում, կամավորական գործողություններում, ազատ ժամանակ և տանը նախընտրած զբաղմունքների ընթացքում տեղի ունեցող ուսումնառությանն ուղղված ավելացած ուշադրությունը պահանջում է ճանաչմանն ուղղված անգամ ավելի լայն մոտեցում, քան նշված էր վերևում: Հիմնական անդամ պետությունները ներկայումս փորձում են ներդնել ոչ ֆորմալ և ինֆորմալ կերպով ձեռք բերված որոշարկման, գնահատման և ճանաչման ազգային համակարգեր: Սրա հետ մեկտեղ ձեռնարկությունների, ոլորտների և ճյուղերի, ինչպես նաև կամավորական կազմակերպությունների (3-րդ ճյուղի կազմակերպություններ) կողմից կիրառվում են նաև զուգահեռ նախաձեռնություններ: Այս մոտեցումները կանգնում են մի շարք համընդհանուր մարտահրավերների առաջ՝

- Մեթոդաբանության հետ կապված մարտահրավերներ: Միշտ չէ որ ակնհայտ է, թե ինչպես կարելի է «չափել» ուսումնառության արդյունքները, որոնք ձեռք են բերվել ոչ ստանդարտացված և բարձր աստիճանի համատեքստային ձևով: Փոխադարձ ուսումնառության և փորձի փոխանակման կարիքը շատ է կարևորվում եվրոպական մակարդակում, հնարավոր կերպով շարժվելով համընդհանուր մեթոդաբանության ուղենիշների և պահանջների4 մշակման ուղությամբ: Քանի դեռ հուսալիությունը և վավերացումը հարցականի տակ են, նոր մոտեցումների հավաստիությունը վտանգված է:
- Հղումային կետերի և ճանաչման ստանդարտների հետ կապված մարտահրավեր: Պարզ չէ, թե ում պետք է տրվի ստանդարտների մշակման և/կամ ճանաչման հղումային մակարդակի առաջադրանքը: Մինչ որոշումները պետք է արտացոլեն որոշակի համատեքստ և բավարարաեն որոշակի կարիքների, կարիք չկա սահմանել և մշակել համընդհանուր սկզբունքներ, որոնք նպաստում են տարբեր մոտեցումների (և կիրառողի ամբողջական արժեքի) հավաստիությանը: Այսպիսի գործընթացները կարող են պարզել, թե ինչպես են մշակվել և սահմանվել ստանդարտները, ինչպես են նրանք պատրաստվում թարմացվել և թե ինչպես են նրանք կապված վավերացման գործընթացի հետ:
- Ճյուղային, ազգային և եվրոպական մակարդակներում ամբողջական կապի ապահովման մարտահրավեր: Քանի որ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչմանն ուղղված նախաձեռնությունների թիվը աճում է, դրա հետ մեկտեղ մեծանում է նաև մասնատվածության վտանգը: Ոչ ֆորմալ ուսումնառությանն

[4]Սա ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման կոնֆերանսի եզրահանգումն է, Եվրոպական փորձառություններ և լուծումներ՝ կազմակերպված Եվրոպական Հանձնաժողովի և Նորվեգիայի կրթության և հետազոտության նախարարության կողմից, 2002թ. մայիսի 6-ին և 7-ին, Օսլոյում

ուղղված ջանքերը մոտիվացվում են բոլոր տիպի ուսումնառությունից առավելագույնս օգուտ քաղելու և քաղաքացիներին հնարավորություն տալով գիտելիքների և կարողությունների համադրման ցանկությամբ՝ տարբեր ձևաչափերի՝ ֆորմալ ինչպես նաև ոչ ֆորմալ մասով: Եթե նոր մոտեցումները մշակված են որպես մեկուսացված ենթահամակարգեր և վեր են հանում գործողությունների սահմանափակ ոլորտ, իրկանում իրենց դիրքերը կարող են զիջել փոխանցումը և կուտակումը: Եվրոպական մակարդակում հիմնական մտավախությունն այն է, թե արդյոք և ինչպես է հնարավոր մի շրջանակի ներքո միմյանց կապել տարբեր նախաձեռնություններ: Ակնհայտորեն զգացվում է մոտեցումների բազմազանության անհրաժեշտություն, բայց հիմնական մարտահրավերն է համոզվել, որ այս նախաձեռնությունները կարող են կապվել և հաղորդակցվել միմյանց հետ: Առանց այսպիսի փոխադարձ կապի չի իրականանա ցկայնս ուսումնառության զեկույցի նպատակը՝ միմյանց կապել ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությունները:

2.3 Մասնագիտական որակավորումների և կարողությունների որակը

Մասնագիտական ուսուցման որակի բարելավման խնդիրը դրված է թե ազգային և թե Համայնքի մակարդակներում առկա քաքաքակությունների վրա: Սրա համար կան շատ պատճառներ: Որակավորված աշխատուժի դերի մասին իրազեկվածությունը մի կողմից տնտեսության մրցունակության բարձրացման և մյուս կողմից գործազրկության դեմ պայքարի մասով բերել է նշանակալի զարգացումներ մասնագիտական կրթության և ուսուցման ազգային և Համյայնքային մակարդակներում:

Ուսուցմանն ուղվված ներդրումների ավելացումը, դրանց արդյունավետության մեջ համոզվելու և դրանցից ստացված հոսքերի կարիքը զգացվում է և կազմակերպությունների և հասարարական մարմինների կողմից: Որակի կառավարման մոտեցումների մշակումը նախնական և շարունակական ուսուցման մեջ այնուամենայնիվ առաջընթաց է արձանագրել, որի աստիճանը երկրից երկիր տարբերվում է: Այս մոտեցումները մշակվել են հիմանկանում բարելավելու հանրային կամ մասնավոր մարմինների կողմից ՄԿՈՒ համակարգերի կառավարումը, ուսումնառության արդյունքները տնտեսական և սոցիալական կարիքների մասով, ուսուցում իրականացնողների ճկունությունը մասնավորապես այն ճյուղերում, որտեղ կատարվում են բարձր տեխնոլոգիական փոփոխություններ, ուսուցման և աշխատուժի շուկաներում շարժունակությունը:

Ավելին, եվրոպական ներգրավվածությունը բարձրացնում է որակի հարցը ԵՄ-ում շարժունակության ապահովման հեռանկարի մասով, որը Համայնքի մակարդակում իր կարևորագույն դերն ունի կրթութայն և ուսուցման քաղաքականությունների մեջ և ուղեկցվում է որակավորումների թափանցիկությանն ուղղված նշանակալի ջանքերով: Բայց ինքնին թափանցիկությունը բավարար չէ, որ երաշխավորի (փոխ)վստահության և պատասխանատվության բաձր մակարդակ ՄԿՈՒ իրականացման մասով: Համայնքի մակարդակում Մասնագիտական կրթության որակի քաղաքականության մշակումը այնուամենայնիվ կարևոր մարտահրավեր է, բայց և պետք է ձեռք բերվի համաձայնություն, թե ինչպես կարելի է դրան հասնել՝ մասնավորապես կապված տարբեր մակարդակներում որոշումների ընդունման և կողմնորոշման հետ:

2.3.1. Մասնագիտական կրթության և ուսուցման որակը Համայնքի քաղաքական օրակարգում

Համայնքը սկսկեց բարձրացնել մասնագիտական կրթության որակի հարցը 1990թթ.: 1994թ. (94/C 374/01) և 1995թ. (95/C/207/03) որոշումներում Խորհուրդը կոչ է անում անդամ պետություններին կենտրոնացնել իրենց ջանքերը մասնագիտական ուսուցման որակի և գրավչության բարելավման վրա և սոցիալական գործընկերների ու համապատասխան մարմինների հետ մեկտեղ զարգացնել փորձի և տեղեկատվության փոխանակումը՝ կապված ազգային փորձի հետ՝ իմիջիայլոց նպատակաուղղված լինելով խրախուսել մասնագիտական կրթություն իրականացնողներին բարելավել իրենց ծառայությունների որակը և մշակել մեթոդներ և գործիքներ մասնագիտական կրթության որակի գնահատման համար:

Այն նաև հարց է դնում Հանձնաժողովի առաջ աջակցել անդամ պետությունների և սոցիալական գործընկերների ջանքերին այս նպատակներին հասնելու և երկխոսության առաջ քաշման և փորձարկման խրախուսման համար՝ մասնավորապես առկա տարբեր ծրագրերի և Համայնքի նախաձեռնությունների միջոցով: Լեոնարդո դա Վինչի ծրագիրը այսպիսով իր մեկնարկից սկսած (1994թ.) փորձի նորարարության և փոխացման առումով համարվել է կարևոր գործիք: Այս ծրագիրը աջակցել է ավելի քան 60 հատուկ ծրագրի՝ մասնագիտական կրթության որակի մշակման, գործիքների ներդրման և կառավարման մասով:

Արդյունքում մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական համագործակցության նոր աշխատանքային մեթոդների մշակման վերաբերյալ 1999թ. որոշմամբ (2000/C 8/04) Խորհուրդը համարեց, որ այդ համագործակցությունը կարող է սերտանալ համաձայնեցված գործողությունների քննարկման և իրականացման համակարգված հիմնական մոտեցումների մշակմամբ՝ համապատասխան ընթացիկ օրակարգի: Այս օրակարգում մասնագիտական կրթության և ուսուցման որակը համարվում է հիմնական առաջնահերթությունը:

Մասնագիտական կրթության որակի վերաբերյալ Եվրոպական Ֆորումի ստեղծումը, որպես Հանձնաժողովի, սոցիալական գործընկերների և անդամ պետությունների միջև հիմնական մոտեցումների համագործակցություն և փոխանակում, համապատասխանում է Խորհրդի Որոշման հիմնական տարրերին: Ֆորումի աշխատանքային ծրագիրը (2001-2002), հիմնված անդամ պետությունների և սոցիալական գործընկերների միջև համաձայնության վրա, ուղղորդվում է երեք հիմնական քաղաքական նպատակով՝ նպաստում աշխատանքի տեղավորվելու կարողության բարելավմանը, դասընթացների մատչելիության ապահովում և ուսուցման պահանջների և իրացման համապատասխանություն: Համենայն դեպս աշխատանքային ծրագիրը ունի որոշակի ճկունություն՝ հնարավորություն տալով աջակցել Համայնքի քաղաքականության մշակմանը: Այսպիսով ՄԿՈՒ մասով ընդլայնված համագործակցությունը նպաստում է՝

- սկզբունքների հաստատմանը՝ ուղղորդելով Համայնքի մակարդակով հանձն առված աշխատանքները, որոնք մեծապես ոգեշնչված են Խորհրդի որոշմամբ և որը կարևորում է տեղեկատվության և փորձի փոխանակումը, նորարարությունների և «լավագույն փորձի» հավաքագրում և տարածում,
- Ֆորումի մանդատի նոր հեռանկարների առաջ քաշմանը (եթե անհրաժեշտ է),

- աշխատանքային ծրագրի սահմանմանը,
- Համայնքի մակարդակով հանձն առված աշխատանքների արդյունքների համակցմանը՝ համապատասխան մակարդակներում ընդլայնված քննարկումների առաջ քաշմամբ,
- կոնկրետ գործողությունների համար առաջարկների հաղորդակցմանը՝ ուղղված որոշման ընդունման գործընթացների տարբեր մասերին:

2.3.2. Մասնագիտական կրթության և ուսուցման որակի մի քանի առանցքային խնդիրներ

Ֆորումի շրջանակներում անդամ պետությունների, սոցիալական գործընկերների, Հանձնաժողովի, Cedefop-ի և մի խումբ փորձագետների միջև հաստատված համագործակցությունը աջակցվել է երկրների միջև տեղեկատվության, փորձառության և «լավագույն փորձի» փոխանակմամբ: Սրանք կենտրոնացվել են որակի զարգացման կարևորագույն չորս բնագավառների վրա՝ որակի կառավարման մոտեցումներ, ինքնագնահատում, քննությունների և վկայականների կանոնակարգում, ՄԿՈՒ բնագավառում որակի ռազմավարության ցուցանիշներ:
Կատարված աշխատանքը հանգեցնում է տարբեր համատեքստերում հանդիպող համընդհանուր խնդիրների որոշարկմանը, ինչպես նաև անդամ պետությունների տարբեր ընտրություններին, որոնք ձգտում են ուսուցման որակի ապահովման և ընդլայնման լուծումներ գտնելուն: Որպես արդյունք, մի շարք առաջարկներ են մշակվել մասնագիտական ուսուցման որակի մշակման և կառավարման տարբեր մակարդակներում որոշման ընդունմանը և քննարկմանը աջակցելու համար:

<u>Որակի կառավարման մոտեցումների</u> (ՈԿՄ) հետևողական մշակման և իրականացման չափանիշները նախնական և շարունակական ուսուցման մասով Ֆորումի աշխատանքներում հանդիսացել են վտանգի տակ գտնվող հիմնական խնդիրը: Հավաքագրված դեպքերը այն կարիքի վկայությունն են, որը պետք է հաշվի առնվի ՈԿՄ մշակման երեք մակարդակներում՝ մետամակարդակ (տեսլական), բովանդակային մակարդակ (գործառնական գործոններ, ինչպիսիք են նպատակների, ստանդարտների, գնահատման համակարգերի ներդնում, դերակատարների ներգրավում և այլն) և համատեքստային մակարդակ (ՈԿՄ-ին աջակցելու առանցքային պայմանները): Այս դեպքերը նաև պարզաբանում են մոտեցումների երկու հիմնական տիպերի գոյությունը՝ նրանք, որոնք ուղղված են նպատակների և արդյունքների անհամապատասխանության չափմանը, որը հանգեցնում է ուսուցում իրականացնողների բարելավմանը և որակի ստանդարտների զարգացմանը և այնպիսի մոտեցումներ, որոնք գերազանցում են և կարող են հանգեցնել նպատակների և գործընթացների ներդրման կրկնության: Ավելի ընդհանուր առմամբ բանական կացության ուսումնասիրությունները ՈԿՄ մասով անդամ պետությունների ռազմավարական որոշումներից զատ (այնպիսի միջազգային գործիքներ, ինչպիսիք են ISO կամ EFQM, ազգային/տեղական նախաձեռնություններ՝ ինչպիսիք են որակի պիտակները, որակի պարգևները, ուսուցման մարմինների հավատարմագրումը, ինքնագնահատումը, ֆորմալ արտաքին վերահսկումը և այլն), ապահովում են հիմնական առանցքային տարրերի որոշարկումը, որը հաշվի է առնվում անդամ երկրներում՝ ՈԿՄ-ն հաստատելիս կամ արդեն իսկ գոյություն ունեցողները մշակելու որոշում կայացնելիս:

Միևնույն ձևաչափով, Ֆորումը նույնպես ուսումնասիրել է պայմանների որոշարկմանն ուղղված աշխատանքները, որոնցում ինքնագնահատման (ԻԳ) կիրառությունը որակի փուլում և դրա իրականացմամբ ռիսկային գործոններում կարող է դառնալ հիմնական գործիքը: Անդամ պետություններից հավաքված 140 դեպք ցույց է տալիս, որ ինքնագնահատումը կանոնավոր կերպով կիրառվում է ՄԿՈՒ իրականացնողների կառավարման մեթոդ: Այն կարող է կիրառվել ազգային և/կամ հանրային մարմինների կողմից, փորձարկել և կառավարել ՄԿՈՒ իրականացնողների որակը (հիմնականում նախնական ուսուցման դեպքում): Մի շարք երկրներ (Միացյալ Թագավորություն, Նիդեռլանդներ, Ավստրիա, Դանիա, Իռլանդիա, Իսլանդիա) ունեն իրվական գործիքներ, որոնք այս կերպ ապահովում են նախնական ուսուցման համակարգերի փորձարկման շրջանակները: Մյուս կողմից ինքնագնահատումը նույնպես կարող է կիրառվել մասնավոր ուսուցում իրականացնողների, ղեկավարների, գործատուների ցանցերի և սոցիալական գործընկերների կողմից՝ ՄԿՈՒ իրականացման որակը բարձրացնելու համար: Կիրառված լինելով կազմակերպչական զարգացման հեռանկարում՝ այն որոշ դեպքերում կարող է դառնալ ՄԿՈՒ իրականացնողների վերահսկման հիմանկան գործիքը, ըստ որի կկիրառվեն այնպիսի տույժեր, ինչպիսիք են պիտակներից կամ փորձառնության իրավունքից զրկումը: Այս դեպքերի կողմից բարձրացված հիմնական խնդիրը հենանանիշի մասով ինքնագնահատման կիրառումն է ՄԿՈՒ իրականացման և դրա ուղղակի ազդեցությունների միջև՝ ՄԿՈՒ իրականացման որակի ամբողջական կատարման բարելավման վերաբերյալ:

<u>Քննությունների և հավաստագրման կազմակերպման</u> որակի չափանիշը նույնպեսկարևորագույն խնդիր է համարվում Ֆորումի աշխատանքում, որը մոտ է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության Թափանցիկության Ֆորումին: Այս առումով շեշտը դրվել է քննությունների և հավաստագրման կազմակերպման որակի չափանիշը առնչվում է տարբեր տարբեր համակարգերի հետ: Այս ոլորտում որակի բարելավման և պահպանման պայմանների մի որոշակի խումբ է որոշարկվել, որն աջակցություն է տրամադրում անդամ պետություններին յուրահատուկ կազմակերպչական որոշումների ընդունման համար ազգային, տարածաշրջանային և ճյուղային մակարդակներում (նախնական և շարունակական ուսուցում): Քննությունների և հավաստագրման կազմակերպման որակի չափանիշը կիրառվում է օրինակ դիպլոմների համակարգված վերանայման, նոր կարիքներ բացահայտելուն ուղղված տարբեր մակարդակներում շարունակական վերլուծությունների, ուսումնասիրման մեթոդների ճկունության և առանց աշխատանքից կտրվելու գնահատման և այլնի համար:

Ֆորումին առնչվող վերջին հարցը վերաբերում է <u>ՄԿՈՒ որակի ռազմավարության չափորոշիչների որորշարկմանը</u>: Մինչ այս մշակված աշխատանքը տրամադրել է հայեցակարգային մոտեցում՝ որոշարկելով ենթատեքստի, ներդրման, արգասիքի, արդյունքի չափանիշները, որպեսզի ուղղակիորեն աջակցի անդամ պետությունների միջև փորձի փոխանակմանը: Այս առումով անդամ պետություններում, Eurostat-ում և ՏՀԶԿ-ում առկա չափորոշիչների արատացոլումն ու վերլուծությունը կարող է կիրառվել ՄԿՈՒ իրականցման որակը որոշարկելու համար՝ համաձայն աշխատունակության բարելավման, պահանջի և մատակարարման համապատասխանեցման և ուսուցման հասանելիության քաղաքականության առաջնահերթությունների: Այս համատեքստում բարձրացված հիմնական հարցը չափորոշիչների կիրառման սահմաններից դուրս գտնվող որակի

քաղաքականության մշակման մասով ռազմավարությունն է, որի նպատակն է ապահովել ստանդարտների կիրառումը (որակի ապահովումը) և/կամ բարձրացնել այդ ստանդարտները շարունակական հենքով: Բարձրացվել է առկա տվյալների բարելավման կարիքի հարցը՝ մասնավորապես ՄԿՈՒ որակի ռազմավարությունների մասով:

Մինչ օրս իրականացված ամբողջական աշխատանքի արդյունքը կարելի է համարել առաջին քայլը, որի նպատակն է ձեռք բերել որակի զարգացման ընդհանուր մի պատկերացում: Դեպքերի շրջանակում մշակված հաշվետվությունները և տրամադրված տեղեկատվությունը նպատակ են հետապնդում ազգային և Համայնքի մակարդակներում աջակցել տարբեր քննարկումներին՝ ուղեցույցների հետևման և գործողությունների իրականացման մասով ընդհանուր համաձայնության գալու նպատակով: Այս քննարկումները հնարավորություն կտան ուսումնասիրել մանրամասնություններ Ֆորումում արծարծված էական հարցերի և ձեռք բերված կարևոր արդյունքների շուրջ: Այս «խաչվող» հարցերը վերաբերում են առանցքային տարրերին, որոնք ուղղված են քաղաքականությունների սահմանման նպաստմանը՝ նախնական և/կամ շարունակական ուսուցման որակի զարգացման մասով:

- Ո՞ր սկզբունքները կարող են ուղորդել մասնագիտական կրթության որակը:
- Որո՞նք են մասնագիտական կրթության որակի սահմանման չափանիշները:
- Ինչպե՞ս կարող է ձևավորվել մասնագիտական կրթության որակի ապահովմանն ուղղված համակարգը, որո՞նք են սկզբունքային տարրերը, ինչպե՞ս կարող են սահմանվել ծախսերի և եկամուտների միջև հարաբերությունները:
- Որ՞ը կարող է հանդիսանալ Պետության, սոցիալական գործընկերների և ուսուցում իրականացնող մարմինների դերը որակի համակարգի մշակման և կառավարման հարցում:
- Որո՞նք են այն սկզբունքները, որոնք աջակցում են հնարավոր տարբեր ընտրությունները:
- Ի՞նչ հեռանկարով, ո՞ր մակարդակում և ու՞մ հետ կարող են նպատակները և ստանդարտներն առաջ քաշվել: Ո՞վ է իրավասություն տալիս դրանց և ո՞վ է վավերացնում դրանք այն դեպքում, եթե ստանդարտներն արդեն ձեռք են բերվել: Ի՞նչ նախաձեռնություններ են ձեռք առնվում, եթե ստանդարտները ձեռք առնված չեն և ո՞վ է փոփոխություններ մտցնում դրանցում:
- Ինչպես կարող է գնահատվել որակի համակարգը և ինչպես կարող են մշակվել ուղղիչ միջոցառումները:
- Որո՞նք են ազգային և Համայքնային մակարդակում լավագույն նախաձեռնությունները մասնագիտական կրթության և ուսուցման որակի քաղաքականության մշակմանն աջակցելու համար:

Կարճաժամկետ և միջնաժամկետ սկզբունքով կարող են նախատեսվել մի շարք հստակ նախաձեռնություններ: Հետևյալ գաղափարները կարող են հաշվի առնվել որակի մասով Ֆորումի ընթացիկ աշխատանքների ընթացքում, որտեղ պատրաստվում են Մոտեցումների որակի ապահովման, Ինքնագնահատման, քննությունների և վկայականների

կազմակերպման, որակի ռազմավարության չափորոշիչների վերաբերյալ մի շարք առաջարկներ:

- Այդ միջոցները կարող են մշակվել որակի ապահովմամբ զբաղվող մարմինների միջև ինստիտուցիոնալ համագործակցության համար:
- Համընդհանուր կերպով համաձայնեցված աշխատանքային պլանների մշակման նպատակով կարող են հաստատվել երկկողմանի կամ բազմակողմանի ծրագրեր, առաջ քաշվել հողումային կամ հետադարձ կապի միջոցները:
- Պետք է հաշվի առնել կրթության և ուսուցման առաջարկների անկախ և կամավորական թեստավորման/հավատարմագրման միջոցները և գործիքները:
- Սերտիֆիկացման և վավերացման գործընթացների (ներառյալ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացումը) մի շարք սկզբունքների համաձայնեցում:
- Ճյուղային, ազգային և եվրոպական մակարդակներում հզորությունների և թուլությունների պարզաբանման համար լավագույն փորձի փոխանակման, մոնիտորինգի և փորձագիտական գնահատականի ակտիվ փոխանակման ավելի համակարգված ռազմավարություն:

2.4 Ճյուղային/ոլորտային մակարդակում եվրոպական/միջազգային որակավորումների մշակում

Վերջին տարիներին կառավարության կամ մասնավոր հատվածի կողմից անընդհատ աճող թվաքանակով նախաձեռնություններ են ձեռք առնվել՝ ուղղված եվրոպական և/կամ միջազգային որակավորումների կազմակերպմանն ու ստանդարտներին: Այդ նպատակով նույնպես կիրառվել են միջազգային շրջանակներ, որոնք արատացոլվում են եվրոպական սոցիալական երկխոսության միջոցով: Առևտրի և աշխատաշուկայի միջազգայնացմանն ուղղված ներկա միտումը զարմացնող չէ: Ձեռնարկությունների անընդահատ աճող թիվը որակավորումների և կարողությունների ոլորտում ընդգծում է ինչ -որ տեսակ համընդհանուր արժույթի կարևորությունը: Այս նախաձեռնությունների ամբողջական ազդեցությունը մինչ օրս եղել է սահմանափակված, քանի որ մեծամասսամբ բոլոր դեպքերում դրանք մշակվել են մեկը մյուսից առանձին և հաճախ ձախողվել են փորձնական մակարդակի սահմանին: Հաջող նախաձեռնությունների թիվը ցույց է տալիս, որ համենայն դեպս այդ պատկերը փոխվում է: Այնուամենայնիվ քննարկելու կարիք կա, թե ինչպես աջակցել այս նախաձեռնություններին և ինչպես դրանցից օգուտ քաղել՝ ներառյալ թե ինչպես խուսափել ներառված ռիսկերից:

Cedefop Հանձնաժողովի և սոցիալական գործընկերների հետ համագործակցության միջոցով նախաձեռնել է այս ոլորտում ներդնել ավելի համաձայնեցված մոտեցում: 2002թ. հունվարի 22-ին Բրյուսելում կայացած հանդիպմանը ավելի քան 20 տարբեր ոլորտների ներկայացուցիչներ (գյուղատնտեսություն, արդյունաբերություն և ծառայություններ), ինչպես նաև միջմասնագիտական սոցիալական գործընկերները ներկայացրեցին ընթացիկ գործողությունների բավականին հետաքրքիր մի ակնարկ: Մասնակիցները այս խնդրին հետագայում հետևելու պատրաստակամություն ցուցաբերեցին: Հանդիպումը նույնպես արժեքավոր պատկերացում է տալիս տարբեր գործոնների վերաբերյալ, որոնք ճյուղային մակարդակում հրահրում են գործողություններ (ինչպես օրինակ աշխատուժի նեղ շուկան), բարելավում են ճյուղի կերպարը (իմիջ) կամ կարգավիճակը, շարժունակությանն ուղղված

խոչընդոտների կրճատման կարիքները, ավելի թափանցիկ որակավորումների պահանջները, ինչպես նաև համընդհանուր պատկերացումների մարտահրավերները, որը արդյունք է հանդիսանում նոր գիտելիքի միջավայրի:[5]

Հետևյալ ակնհայտ օրինակները ցույց են տալիս, թե ինչպիսի տարբեր նախաձեռնություններ են առաջ քաշվել ճյուղային մակարդակում:

- «Կայուն արհեստավարժեցում» ծրագիրը (որում մասնակցում են 8 երկիր), որը նախաձեռնվել է Ֆրանսիայի կրթության նախարարության և աջակցվել Հանձնաժողովի կողմից, որի նպատակն է եվրոպական որակավորումների ստանդարտների հիմնման և վերականգնման համար համընդհանուր մեթոդաբանության ստեղծումը: Այս ստանդարտները մշակվում են «վերևից ներքև» սկզբունքով (հյուրանոցային և ավտոմոբիլային արտադրությունում)՝ իրենց ակտիվ ներդրումն ունենալով արդյունաբերության ճյուղերի վրա: Դրա նպատակն է ստեղծել «Եվրոպական Դիպլոմ», որն անդամ պետությունների կողմից կտարամադրվի կամավորական սկզբունքով՝ ի հավելումն գոյություն ունեցող ազգային վկայականների:
- ՏՀՏ ճյուղը ակտիվություն է ցուցաբերում տարբեր նախաձեռնություններում, որի հիմանական նպատակն է բարձրացնել որակական և քանակական հմտությունների պակասը: Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ, հիմնվել է Կարիերայի Տարածություն (Career Space) կոնսորցիում, որը բաղկացած է 11 հիմնական ՏՀՏ ընկերություններից, ինչպես նաև մասնագիտական ասոցիացիաներից: Այս աշխատանքում առաջին քայլն ուղղված էր մշակել տիպիկ հմտությունների պրոֆիլ, որը համապատասխանում է ՏՀՏ առանձքային աշխատանքներին, և երկրորդը՝ ՏՀՏ նոր ուսումնական ուղեցույցների[6] մշակմանը: Այս պրոֆիլներն ու ուղեցույցները կաջակցեն դասընթացների մշակմանը, որպեսզի այդ պրոֆիլները համապատասխանեն Եվրոպայի ՏՀՏ արդյունաբերության և «eEurope[7]»-ի կարիքներին:

Այլ օրինակներ կարելի է գտնել կապված մետաղավերամշակման, էլեկեկտրոտոպիայի, ձկնարատադրության, երկրաբանության և տրանսպորտի հետ:

Ճյուղային մակարդակում որակավորումների մշակմանն աջակցություն և ուղորդում ցուցաբերելու համար մի քանի տարբերակներ պետք է հաշվի առնվեն:

- «Մասնագիտական հիմական սկզբունքները», որոնք ներկայացված են որակավորումների ճանաչման ընդհանուր համակարգի միջոցով (2.1.1) մասնագիտական ասոցիացիաներին առաջարկում է որակի չափանիշի սահմանման

[5] 2002 թ-ի սեպտեմբերի 23-24-ը Դանիայում իրականացվելիք կոնֆերանսը պետք է տրամադրի ավելի ամբողջական ակնարկ ճյուղային մակարդակում առկա նախաձեռնությունների և ակնկալիքների վերաբերյալ և երկրորդը այն նշում է սոցիալական գործընկերների, ինչպես նաև եվրոպական, ազգային տարածաշրջանային կառույցների համար այս գործընթացի վրա ազդելու հնարավոր տարբերակներ: Կոնֆերանսը, որին աջակցում են Հանձնաժողովը, Փոփոխության վերաբերյալ Եվրոպական Մոնիտորինգի Կենտրոնը (դուբլինյան հիմնադրամ) հնարավորության կտան քննարկել, թե եվրոպական մակարդակում ինչպիսի ամբողջական աջակցություն պետք է առաջարկվի, որը կնպաստի մոտեցումների բազմազանությանը, բայց և կխուսափի հատվածայնությունից:

[6] տես http://www.career-space.com/

[7] «Էլեկտրոնային Եվրոպա»

և համաձայնեցման հնարավորություն՝ քննարկվող մասնագիտությանը հետամուտ լինելու համար:

- Ճյուղային հանձնաժողովը, որը ստեղծվել է եվրոպական սոցիալական երկխոսության միջոցով, կարող է կիրառվել ճյուղային մակարդակում աշխատանքներին հետամուտ լինելու համար: Որոշակի ճյուղեր արդեն կիրառել են այս հնարավորությունը:
- Սոցիալական երկխոսությունը նաև կարող է կիրառվել ստանդարտների ներդրման և ուսուցման պահանջների մշակման պահանջների և առաջարկությունների սահմանման համար:
- Ստանդարտացման Եվրոպական Հանձնաժողովի (ԵՍՀ) կողմից մշակված համակարգերը և գործիքները կարող են կապված լինել ճյուղային որակավորումների մշակման հետ: ԵՍՀ-ն 20 անդամից բաղկացած ասոցիացիա է, որի մեջ մտնում են ԵՄ անդամ պետությունները, ինչպես նաև Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիան: ԵՍՀ-ն սերտորեն համագործակցում է Միջազգային Ստանդարտների կազմակերպության (ՄՍԿ) և ստանդարտների ներդրման իրավունք ունեցող այլ համապատասխան մարմինների հետ: ԵՍՀ ներկայումս իր մեջ ներառում է ավելի քան 300 առևտրային և մասնագիտական մարմիններ, որոնք կապ ունեն տեխնիկական հանձնաժողովի հետ: Այս կազմակերպությունները տրամադրում են ստանդարտիզացման նախնական տարբերակներ: ԵՍՀ-ի նպատակն է ՄՍՀ-ի կամ Եվրոպան և համաշխարհային շահը ներկայացնող մասնավոր կազմակերպությունների հետ մեկտեղ ողջ Եվրոպայով մեկ իրականացնել կամավորական ստանդարտիզացիա՝ շուկայի կարիքները բավարարելու, առևտրի խոչընդոտները վերացնելու, Եվրոպական օրենսդրությանը աջակցելու համար:
- Հաշվի առնելով Cedefop-ի՝ սոցիալական գործընկերներին աջակցման առաքելությունը Կենտրոնը ճյուղային մակարդակում որակավորումների մշակման ընթացիկ ջանքերին կարող է տրամադրել արժեքավոր աջակցություն: Սա կարող է բաղկացած լինել նախաձեռնությունների ակնարկի տրամադրումից և կարող է ներակայացնել կոնկրետ դեպքի մասին ուսումնասիրություններ, որոնք արժեքավոր են և փորձառությունների փոխանակման աջակցման և երկկողմանի (փոխադարձ) ուսումնառության համար: Ճանաչման համընդհանուր համակարգի (մասնագիտական հիմնավոր սկզբունքներ) և եվրոպական սոցիալական երկխոսության շրջանակներում Cedefop կարող է նաև գործառնական դեր խաղալ ընթացիկ աշխատանքների աջակցման համար: Եվրոպական Ուսուցման Հիմնադրամի դերը, կապված թեկնածու երկրների հետ, նույնպես պետք հաշվի առնվի այս ենթատեքստում:

Ներկայիս հետաքրքրությունը կապված ճյուղային որակավորումների և ստանդարտների հետ բերում է հնարավոր շահերի իրազեկության ինչպես նաև տվյալ խնդրի հետ կապված ռիսկերի մեծացման: Ճյուղային մոտեցման հնարավորության դեպքում շահերը, թափանցիկության և փոխադարձ վստահության միջոցով, կարող են տրամադրել ուսումնառության ձեռքբերումների «ինքնաբերաբար» ճանաչման հիմք: Հավասարապես կարևոր է նաև այն հանգամանքը, որ արդյունաբերության ոլորտները և ճյուղերը առաջինն են, որոնք կհակառակվեն տեխնոլոգիաների և շուկաների ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններին և համապատասխանաբար էլ կլինեն առաջինը, որոնք կորոշարկեն

իրավասու մշակման կարիքները: Ռիսկերը, որոնք ներառում են նաև ստանդարտների ռիսկերը, կարող են ներդրում ունենալ ճյուղային պահպանությանը՝ այպիսով, ավելի բարդացնելով տարբեր մակարդակներում ձեռք բերված որակավորումների միջև կապը (ներառյալ շարժունակությունը):

Պետք է հաշվի առնվեն հետևյալ կոնկրետ քայլերը՝

- Համոզվել, որ բազմազան նախաձեռնությունները բերում են համաձայնեցված մոտեցման: Cedefop հանձնաժողովի համապատասխան մարիների հետ համագործակցության հետ մեկտեղ (Կրթության և Մշակույթի, Զբաղվածության և Ներքին Շուկայի վարչություններ) միմյանց է կապում համապատասխան շահագրգիռ և հետաքրքրված խմբերի: Դրա զարկը կարող է տրվել Դանիայում սեպտեմբերին կայանալիք կոնֆերանսի ընթացքում: Այսպիսի համաձայնեցված մոտեցման կարևորագույն ձեռքբերումը կընդլայնի թափանցիկությունն ու համեմատելիությունը:
- Հաշվի առնել ճյուղային մոտեցումների միջմասնագիտական շրջանակը՝ ներառյալ ճյուղային աշխատանքի հիմնական սկզբունքները, որակավորումների ստանդարտները, ուսումնական պլանների ուղեցույցները վավերացնելու համընդհանուր սկզբունքները և ընթացակարգերը, ինչպես նաև ճյուղային որակավորումների մոտեցումների ամբողջական որակին աջակցող ընթացակարգերը: Այսպիսի շրջանակը չի կարող մշակվել մեկուսացված կերպով, բայց պետք է կապված լինի ավելի ընդհանուր համակարգի հետ՝ կրեդիտների փոխանցման համար (ինչպես քննարկվել է 2.2 կետում):

Ոչ անհատ քաղաքացիները ոչ էլ մասնավոր ձեռնարկությունները կարիք ունեն «պատիճավորված» կամ մեկուսացված որակավորումների, որոնք սահմանափակված են մի ենթատեքստով կամ ոլորտով: Այս մարտահրավերը պետք է աջակցի այն զարգացմանը, որտեղ տարբեր ճյուղերում մշակված որակավորումները կարող են համակցվել, որտեղ ճյուղային և ազգային որակավորումները կարող են փոխադարձաբար միմյանց հզորացնել և որտեղ ճյուղային նախաձեռնությունները բարձրացնում են եվրոպական և միջազգային հմտությունների կարիքները:

3. Եվրոպական մասնագիտական կրթության և ուսուցման ընդլայնված համագործակցության մասով մշակել «գործիքների մի ամբողջություն»: Ինչպե՞ս բարելավել և նորացնել աշխատանքային մեթոդները:

Ընդլայնված համագործակցությունը պետք է մշակվի քաղաքականության շրջանակում՝ սահմանելով հիմնական տեսլականները, հատուկ նպատակները, այս տեսլականները և նպատակները իրականացնելու ժամանակացույցը և հիմնական դերերի և պարտավորությունների տարորոշումը: Այսպիսի շրջանակով պայմանավորված պրակտիկ համագործակցության մասով հաջողությունը կախված է ստեղծագործ և արդյունավետ աշխատանքային մեթոդների մշակման կարողությունից: Այս գլխի նպատակն է թվարկել բոլոր հնարավոր մոտեցումների բազմազանությունը՝ դրանով էլ տրմադրել քննարկումների հիմք այն բանի շուրջ, թե ինչպես առաջ տանել վերը նշված չորս ոլորտներին վերաբերող աշխատանքը:

- Սերտ ինստիտուցիոնալ կապեր պետք է հաստատվեն եվրոպական որակավորումների խնդրով զբաղվող մարիների միջև: Չնայած որոշ երկրներ արդեն համագործակցում են գործընթացային հիմքով, այնուամենայնիվ, կարիք կա զարգացնել այնպիսի համագործակցություն, որը ավելի հարատև է և գործառնական: Այս կապերը պետք է արտացոլեն այսօր Եվրոպայում առկա այն հսկայական բազմազանությունը, որը գոյություն ունի ինստիտուցիոնալ կառույցներում: Որակավորումների խնդրով զբաղվող մարմինների եվրոպական ամրակայված կոնֆերանսի կազմակերպումը կարող է կարևոր քայլ հանդիասալ այս ոլորտում և համընդհանուր համագործակցության սկզբունքների և ծրագրերի մասով կարող է տանել ավելի համակարգված աշխատանքի: Ամրակայված կոնֆերանսը առկա տարբերությունների և նմանությունների կառուցողական պարզաբանման միջոց կարող է հանդիսանալ: Սերտ ինստիտուցիոնալ համագործակցությունը կարող է կազմակերպվել այնպես, որ սոցիալական գործընկերները, ճյուղային ներկայացուցիչները և մասնագիտական ասոցիացիաները համակարգված և համապատասխան կերպով ընդգրկված լինեն դրանում: Որակավորումների խնդրով զբաղվող մարիների ամրակայված կոնֆերանսը այնուամնեյանիվ պետք է բաց լինի և ներառի այս ամենը:
- Համագործակցության նախաձեռնությունները պետք է հետամուտ լինեն հավասարապես երկկողմանի և բազմակողմանի համագործակցության միջոցով: Այսպիսի նախաձեռնությունները մասնավորապես, հավանաբար, կլուծեն այն խնդիրները, որոնք հատուկ են որոշակի շրջանների համար: Երկկողմանի կամ բազմակողմանի համագործակցությունը օգտակար կլինի նաև լուծումների թեստավորման համար, որոնք վերջնական արդյունքում պետք է իրականցվեն եվրոպական մակարդակում: Այս մոդելը պատկերված է «Կայուն մասնագիտացում» ծրագրի միջոցով, որը նախաձեռնվել է Ֆրանսիայի կրթության նախարարության կողմից:
- Ճյուղային մակարդակում որակավորումների մշակման ընդլայնված միտումը պահանջում է համագործակցության միասնական սկզբունքներ, որտեղ բարձրացվում են թափանցիկության, փոխակերպելիության և որակի հետ կապված խնդիրները: Մեկնարկային կետը կլինի այն բանի հաշվի առնումը, թե ինչպես առաջ քաշված «մասնագիտական սկզբունքային մոտեցումները» կարող են լավագույնս կիրառվել՝ կապված ճանաչման ընդհանուր համակարգի հետ: Կարիք կա նաև ուսումնասիրել, թե արդյոք այս մոտեցումը կարող է ավելի լավ համակարգվել եվրոպական մակարդակում սոցիալական երկխոսության հետ մեկտեղ: Այսպիսի շրջանակը, որը հավանաբար աջակցվում է Cedefop (և ԵԿՀ-ի) կողմից, պետք է ունենա երկակի նպատակ՝ մի կողմից աջակցել ոլորտներին և ճյուղերին բարձր որակի կրթության և ուսուցման լուծումներ գտնելում, մյուս կողմից՝ բարձրացնել անհատ քաղաքացիների կարիքները՝ հավանական և թափանցիկ որակավորումների մասով:
- Լավագույն փորձի, մոնիտորինգի և փորձագիտական գնահատականի ակտիվ փոխանակման համար անհրաժեշտ է մշակել ավելի համակարգված ռազմավարություն՝ ճյուղային, ազգային և եվրոպական մակարդակում ուժեղ և թույլ կողմերի պարզաբանման համար: Cedefop և ԵԿՀ-ը այս ոլորտում հետագայում պետք է մշակեն մեթոդներ և ռազամավարություններ, ինչպես նաև անհրաժեշտության

դեպքում պետք է աջակցվի և զարգացվի այլ միջազգային մարմինների (հիմնականում ՏՀԶԿ) հետ համագործակցությունը: Ջանքեր պետք է կիրառվեն մոնիտորինգը և փորձագիտական գնահատականը քաղաքականության գործընթացներում ավելի սերտ կերպով ինտեգրելու համար՝ համոզվելով, որ քաղաքականության գործընթացների և մոնիտորինգի միջևգոյություն ունի շարունակական հետադարձ կապ:

- Պետք է հաշվի առնվեն անկախ թեստավորման և կրթության ու ուսուցման առաջարկների հավատարմագրման միջոցներն ու գործիքները, օրինակ՝ Գերմանիայում 'Stiftung Bildungstest'-ը: Եվրոպական ցանցը կարող է մշակել համընդհանուր ուղեցույցներ և պահանջներ, որոնք պետք է կիրառվեն կամավորական սկզբունքով: Այսպիսի անկախ թեստավորումը և ակրեդիտացիան պետք է հատկապես կարևոր լինեն կապված ազգային որակավորումների համակարգից դուրս առաջարկված կրթության և ուսուցման, օրինակ՝ շարունակական ուսուցման հետ: Սրա հետ կապված մոտեցումները, բացի ոչ ֆորմալ և աշխատավայրում կատարվող ուսուցումից, պետք է կիրառեն այնպիսի տարրեր, ինչպիսիք են ՄԲ «Մարդկանց մեջ ներդրում անողները» Եվրոպայի համատարած ռազմավարության մեջ: Արժեքավոր փորձ կարելի է գտնել նաև հատուկ մասնագիտական ճյուղերում, որտեղ երկար ժամանակահատվածում մշակվել է ուսուցման ծրագրերի և առաջարկների միջազգային ակրեդիտացիան: Սրա օրինակ է ծառայում ֆրանսիական 'Ecole Nationale de la Sante Publique'-ը՝ իր ուսուցման ծրագրերի մեթոդոլոգիայի մշակմամբ և ակրեդիտացիայի հղումային շրջանակով: Այս բոլոր մոտեցումները կարող են պահանջել եվրոպական «որակի պիտակի» ծանուցում՝ նշելով, որ ի նկատի ունեցած կառույցը կամ ուսուցումը բավարարում է նախապես սահմանված և համաձայնեցված մի շարք սկզբունքների և չափանիշների:
- Սերտիֆիկացման և վավերացման գործընթացների (ներառյալ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացումը) մի շարք սկզբունքների շուրջ համաձայնեցում: Մի այլընտրանքը միջազգային առկա ստանդարտների (մշակված CEN-ի և ISO-ի կողմից) կիրառումն է որպես մեկնարկային կետ՝ արձագանքելով հավաստի վկայականների մասով անհատ քաղաքացիների կարիքներին, որոնք կարող են ձեռք բերվել ցանկացած երկրում և համատեքստում ինչպես նաև կիրառվել ևս ցանկացած երկրում և համատեքստում:
- Եվրոպական մակարդակում կրեդիտների փոխանցման շրջանակի մշակում՝ հետազոտության և ինստիտուցիոնալ համագործակցության միջոցով: Մի այլընտրանքը սրան հետամուտ լինելն է, որպես Համալսարանների համար մշակված Կրեդիտների Փոխանցման Եվրոպական Համակարգի տարածում (ամբողջությամբ օգուտ քաղելով համապատասխան ծրագրերի ներդրումից, ինչպիսիք են Սոկրատեսը, Լեոնարդո դա Վինչին և Երիտասարդության «Համատեղ Գործունեությունը»). Այլ տարբերակ է՝ ամբողջությամբ տարածել առկա ԵՎՐՈՓԱՍԻ դերն ու շրջանակները՝ փոխակերպելով այն մի համակարգի, որը թույլ է տալիս գրանցել կրթության, ուսուցման և ուսումնառության բոլոր ձևերը:
- Ողջ եվրոպայով մեկ կրեդիտների փոխանցումը պահանջում է որակավորումների մակարդակների համընդհանուր շարք: Անհրաժեշտ է հաշվի առնել այս ոլորտում նախկին փորձը:

- Անհրաժեշտ է որ առկա Եվրոպական Ֆորայի (Թափանցիկություն և Որակ) դերը հաշվի առնվի մյուս տարի: Դրա նպատակը պետք է լինի դրանց ներուժից ամբողջական օգուտ քաղելը (ապահովելով տեխնիկական աջակցության և մտածելակերպի համընդհանուր սկզբունքներ) և միևնույն ժամանակ ոչ անհրաժեշտ խառնաշփոթից խուսափելը: Դա հնարավոր կդարձնի Եվրոպական Մասնագիտական Ուսուցման Ֆորումում այս կառույցների միջև կապը քննարկել համապատասխան թեմատիկ աշխատանքային խմբերի հետ, ինչպիսիք են թափանցիկությունը, որակը, կողմնորոշումն ու ոչ ֆորմալ ուսումնառությունը:
- Անհրաժեծտ է հաշվի առնել Լեոնարդո դա Վինչի ծրագրի (և այլ ԵՄ ծրագրերի) դերը: Պետք է հետամուտ լինել «արժևորման» մոտեցմանը, որը պահանջվեց 2002թ-ի ապրիլին Մադրիդում կայացած միջազգային կոնֆերանսի ժամանակ: Այն պահանջում է «հետադարձ կապի փուլ», որի ժամանակ մասնագիտական կրթությանը և ուսուցմանը վերաբերող քաղաքականությունները ակնհայտ ձևով իրենց ազդեցությունն են ունենում ծրագրի վրա և որտեղ ծրագրի արդյունքները հետադարձվում են քաղաքականության մշակման գործընթացներում:

Եվրոպական Հանձնաժողով, 30/05/02

Ցկյանս ուսումնառության տերմինաբանական բառարան

ակտիվ քաղաքացիություն

Իրենց համայնքում քաղաքացիների մշակութային, տնտեսական, քաղաքական/ժողովրդավարական և/կամ սոցիալական մասնակցությունը որպես մի ամբողջություն

հարմարվողականություն

Ձեռնարկությունների համար և նրանց համար, ովքեր աշխատում են ձեռնարկություններում նոր տեխնոլոգիաներին, նոր շուկայական պայմաններին և նոր աշխատանքային ոճին հարմարվելու կարողություն

գնահատում

Ընդհանուր մի տերմին, որը ընդգրկում է անհատի կամ խմբի գործունեության գնահատման/դատման բոլոր մեթոդների կիրառությունը

վկայական/դիպլոմ

պաշտոնական մի փաստաթուղթ, որը ֆորմալ ձևով հաղորդում է անհատի ձեռքբերումները

վկայում

վկայականների կամ դիպլոմների հանձման գործընթաց, որը պաշտոնապես ճանաչում է անհատի ձեռքբերումները՝ հետևելով գնահատման գործընթացին

քաղաքացիական հասարակություն

պետության և շուկայի հետ մեկտեղ հասարակության «երրորդ ճյուղը», որը ընդգրկում է կառույցներին, խմբերին և ասոցիացիաներին (կամ կառուցվածքային կամ ոչ ֆորմալ) և որը կարող է միջնորդ հանդիսանալ պետական մարմինների և քաղաքացիների միջև

հատուցող ուսումնառություն

Ուսումնառության այն իրականացումը, որը պետք է ձեռք բերվի պարտադիր ուսուցման ընթացքում:

կարողություն

արդյունավետ կերպով փորձառնության, գիտելիքի և որակավորումների կիրառման ունակություն

կորպորատիվ և սոցիալական պատասխանատվություն

Կորպորատիվ կառույցների նվիրումը սոցիալապես, տնտեսապես և բնապահպանական տեսանկյունից կայուն կերպով գործառնելու համար՝ միևնույն ժամանակ գիտակցելով ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի հետաքրքրությունները:

թվային բաժանարար

Անդունդ, որը առկա է տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաները արդյունավետ կիրառողների և չկիրառողների միջև:

թվային գրագիտություն

ՏՀՏ-ն վարպետորեն կիրառելու կարողություն

էլեկտրոնային ուսումնառություն

ուսումնառություն, որը աջակցվում է ՏՀՏ-ի կողմից

աշխատանքի տեղավորման կարողություն

անհատի կարողությունների այն աստիճանը, որը ցուցադրում է անհատը աշխատանք գտնելիս, այն պահպանելիս և զբաղվածության կարողությունները թարմացնելիս

լիազորում

մարդկանց իրենց կյանքում և համայնքում կամ հասարակությունում պատասխանատու նախաձեռնություններ իրականացնելու իրավասություն տալու գործընթացը՝ տնտեսական, քաղաքական և սոցիալական մասով

եվրոպական կառավարում

եվորպական գործերի վարչարարությունը՝ ավանդական քաղաքական մարմինների և «քաղաքացիական հասարակության», մասնավոր շահագրգիռ կողմերի, պետական կառույցների, քաղաքացիների փոխգործունեության միջոցով

ֆորմալ ուսումնառություն

ուսումնառություն, որը բնորոշ ձևով իրականացվում է կրթության կամ ուսուցման կառույցի կողմից, որը ուսումնառության նպատակի, ժամանակի և աջակցության մասով կառուցվածքային է և տանում է վկայականի տրամադրման:

Ֆորմալ ուսումնառությունը նպատակային է ուսումնառողի հեռանկարի տեսնակյունից

կողմնորոշում

Գործողությունների մի շարք, որը մշակված է մարդկանց աջակցելու համար իրենց կյանքի (կրթության, մասնագիտական և անձնական) վերաբերյալ որոշումներ կայացնելու և այդ որոշումները կիրառելու հարցում:

(կարողությունների) որոշարկում

Կարողությունների բնույթի և շրջանակների որոշման և սահմանման գործընթացը

ինֆորմալ ուսումնառություն

Ուսումնառություն, որը առաջ է գալիս ամենօրյա կյանքի գործունեությունից՝ կապված աշխատանքի, ընտանիքի կամ հանգիստ ժամանակի հետ: Այն, ուսումանռության նպատակի, ժամանակի և աջակցության առումով կառուցվածքային չէ և սովորաբար չի հանգեցնում վկայականի տրամադրման: Ինֆորմալ ուսումնառությունը կարող է լինել միջազգային, բաըց մեծամասսամբ այն միջազգային չէ (պատահական է):

միջսերնդային ուսումնառություն

Ուսումնառություն, որը ի հայտ է գալիս փորձառնության, գիտելիքի կամ կարողությունների սերնդից սերունդ փոխանցման միջոցով:

գիտելքահեն հասարակություն

Հասարակություն, որի գործընթացները և փորձը հիմնված է գիտելիքի արտադրության, բաշխման և կիրառման վրա:

ուսումնառող համայնք

Համայնք, որը լայնորեն առաջ է քաշում ուսումնառության մշակույթը՝ մշակելով արդյունավետ տեղական համագործակցություն համայնքի բոլոր ճյուղերի միջև և աջակցում ու հրահրում է անհատներին ու կազմակերպություններին մասնակցել ուսումնառությանը:

ուսումնառության համաբերող

Ցանկացած մարդ, ով համաբերում է գիտելիքի և կարողությունների ձեռքբերումը՝ ստեղծելով ուսումնառության նպաստավոր պայմաններ՝ ներառյալ նրանց, ովքեր իրականացնում են ուսուցման և կողմնորոշման գործառույթ: Ողջ ուսումնառության գործընթացում համաբերողը կողմնորոշում է ուսումնառողին՝ ուղեցույցներ, դիտողություններ և խորհուրդ տալով, ինչպես նաև ի հավելումն աջակցելով գիտելիքի և կարողությունների մշակմանը:

ուսումնառության կազմակերպություն

Կազմակերպություն, որը բոլոր մակարդակներում (անհատական և խմբակային) խրախուսում է ուսումնառությունը և շարունակ փոխակերպում է ինքնին որպես արդյունք:

ուսումնառության շրջան

Շրջան, որում բոլոր շահագրգիռ կողմերը համագործակցում են ուսումնառության տեղական հատուկ կարիքները բավարարելու և համընդհանուր խնդիրներին համատեղ լուծումներ տալու համար:

ցկյանս ուսումնառություն

Ամբողջ ուսումնառական գործողությունները, որոնք իրականացվել են ողջ կյանքի ընթացքում ՝ գիտելիքի, հմտությունների և կարողությունների բարելավման նպատակով՝ անձնական, քաղաքացիական, հասարակական և/կամ զբաղվածության հետ կապված հեռանկարով:

lifewide ուսումնառություն

Ուսումնառության բոլոր գործողությունները թե ֆորմալ թե ոչ ֆորմալ և թե ինֆորմալ: lifewide ուսումնառությունը ցկյանս ուսումնառության մի տեսակ է:

ոչ ֆորմալ ուսումնառություն

Ուսումնառություն, որ իրականացված չէ կրթության կամ ուսուցման հաստատության կողմից և սովորաբար չի հանգում վկայականի տրամադրման: Այն, համենայն դեպս, ուսումնառության նպատակների, ժամանակի և աջակցության մասով կառուցվածքային է: Ոչ ֆորմալ ուսումնառությունը միջազգային է ուսումնառողի հեռանկարի տեսակետից:

կարողությունների ճանաչում

1) *ֆորմալ ճանաչում*՝ կարողություններին պաշտոնական կարգավիճակի տրամադրման գործընթաց

- վկայականների տրամադրման միջոցով
- ձեռքբերված կարողությունների վավերացման, հավասարության և կրեդիտային միավորների տրամադրման միջոցով

և/կամ

2) *սոցիալական ճանաչում*՝ կարողությունների արժեքի ճանաչումը տնտեսական և սոցիալական շահագրգիռ կողմերի կողմից

սոցիալական ներգրավում

Անհատների կամ անհատների խմբերի ներգրավումը հասարակություն՝ որպես քաղաքացիներ և կամ որպես տարբեր «հասարակական» սոցիալական ցանցերի անդամներ: Սոցիալական ներգրավումը հիմնավոր կերպով արմատավորված է աշխատաշուկայի կամ տնտեսական ներգրավման մեջ:

արժևորել ուսումնառությունը

Ուսումնառության մասնակցության և ձեռքբերումների (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ) ճանաչման գործընթացը, այնպես որ բարձրացնի դրան բնորոշ արժեքի իրազեկությունը և պարգևատրի ուսումնառությունը: